

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
13 հունվարի 2012 թ.
Պետական գրանցման թիվ 12412014

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի N 2034-Ն
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

29 դեկտեմբերի 2011 թ.
ք. Երևան N 3514-Ն

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի օգոստոսի 16-ի «ԱԱՀ-ի հաշվարկի և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևերը, դրանց լրացման կարգերը հաստատելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 14-ի N 1423-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2034-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանով հաստատված N1 հավելվածի՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևի 18-րդ կետում «Հաշվետու ժամանակաշրջանում ներմուծված՝ ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգված ապրանքների (օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված)» բառերը փոխարինել «Ներմուծված այն ապրանքների, որոնց մասով օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն առաջանում է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար» բառերով,

2) հրամանով հաստատված N1 հավելվածի՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևի լրացման կարգի 22-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հաշվարկի 18-րդ կետում՝ [Ա] վանդակում լրացվում է ներմուծված այն ապրանքների մաքսային արժեքը, որոնց մասով Օրենքի 6.1-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասին համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում առաջացել է ԱԱՀ-ի վճարման պարտավորություն, իսկ [Բ] վանդակում՝ առաջացած ԱԱՀ-ի պարտավորության գումարը:»:

Կոմիտեի նախագահ

Գ. Խաչատրյան